ԵՂԵՌՆ - 100

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՌԱՖԱՅԵԼ ԴԵ ՆՈԳԱԼԵՍԻ «ՉՈՐՍ ՏԱՐԻ ԿԻՍԱԼՈՒՍՆԻ ՆԵՐՔՈ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1915 թվականին վենեսուելացի գրող և զինվորական Ռաֆայել դե Նոգալեսը Առաջին աշխարհամարտին մասնակցելու անդրդվելի վճռականությամբ փորձում է զինվորագրվել բելգիական, ապա գերմանական կանոնավոր զորքեր և մերժվում. արկածախնդրությունն Առաջին համաշխարհային պատերազմի հանդեպ չեզոք դիրք ընդունած երկրի քաղաքացուն հասցնում է Օսմանյան կայսրություն, ուր վերջինս անձամբ հանդիպում է երիտթուրքերի առաջնորդներ Էնվեր և Ջեմալ փաշաներին: «Կատվի ժպիտը,- հիշում է Նոգալեսը Ջեմալի կապակցությամբ,- չէր թաքցնում նրա մեջ նստած արյունարբու վախկոտին»: Այս անգամ արկածախնդիր վենեսուելացու բախտը բերում է, և նա սիրով ընդունվում է թուրքական բանակի շարքեր: Նոգալեսը թուրքական զորքերի հետ անցնում է հայկական բազմաթիվ քաղաքներով ու գյուղերով, դառնում ոչ միայն հայերի կոտորածների ականատեսը, այլև անմիջական մասնակիցը. գուցե հայտնի չէ, բայց նա նաև Վանի պաշարման հրամանատարներից մեկն է եղել և այդ կապակցությամբ անթաքույց հիացմունքով խոսել հայերի քաջության, հատկապես Արամ փաշայի մասին, որին նա համարում է իր հանդիպած ամենատաղանդավոր հայ զորավարը, ի տարբերություն Անդրանիկի, որին նա «դաժան մարդասպան» և «լպիրշ պարտիզան» է անվանում: Սակայն որոշ ժամանակ անց բազմաթիվ մարտական գործողությունների մասնակցած հմուտ զինվորականը խոր հիասթափություն է ապրում Առաջին համաշխարհային պատերազմի նման շրջադարձից, մասնավորապես հայերի կոտորածների զանգվածային բնույթից և այն անխղճությունից ու դաժանությունից, որով թուրքերն իրականացնում էին այդ կոտորածները:

Տարիներ անց թուրքական բանակի պատվո գեներալ վենեսուելացին խոստովանում է. «Ես անիծում էի դաժան այն ճակատագիրը, որ

ինձ իմ հավատակիցների դահիճը դարձրեց»[1]: Նոգալեսը «Հազար ու մեկ գիշերվա» հեքիաթային աշխարհներով թափառող ասպետից հանկարծ Դոն Կիխոտ է զգում իրեն և որոշում ամեն գնով վերադառնալ հայրենիք: Նա, բնականաբար, զգուշանում է հողմաղացների դեմ պայքարելուց՝ երիտթուրքերի պարագլուխների առջև իր անհամաձայնությունն արտահայտելուց, և ստիպված է լինում, ինչպես ինքն է խոստովանում, նրանց անմարդկային արարքների վրա աչք փակել, նույնիսկ շինծու ժպտալ, բայց թուրքերը որսում են նրա ներքին խռովքն ու ընդվզումը: Որպես օտարերկրացի, որ դարձել է «մեծ ոճիրի» ականատես, երիտթուրքերի պարագլուխները մի քանի անգամ փորձում են դավադրաբար, «թուրքական ոճով», ինչպես Նոգալեսն ինքն է ասում, անհետ կորցնել իրեն. նա ստիպված է լինում խույս տալ Թալեաթի և Ջևդեդի հետապնդումներից՝ անցնելով լքված բնակավայրերով, անապատներով, հասնում մինչև Բեյրութ, Դամասկոս, Երուսաղեմ, Բաղդադ և այլ քաղաքներ, ապա վերադառնում Վենեսուելա: 1928 թվականին իսպաներեն լեզվով լույս է տեսնում նրա «Չորս տարի կիսալուսնի ներքո» հուշագրությունը, որի ամբողջ տպաքանակն անհետանում է: Իսպաներեն պահպանված միակ օրինակից կատարված ռուսական թարգմանության առաջաբանում խոսվում է այս գրքի մատենագիտական բացառիկության մասին. «Այս գիրքը չկա Ռուսաստանի գրադարաններում և հավանաբար այլ երկրների գրադարաններում նույնպես: Այն ժամանակին գնել և ոչնչացրել են»[2]:

«Չորս տարի կիսալուսնի ներքո» հուշագրությունը գրված է Հին արևելքի և առհասարակ համաշխարհային պատմության, պատմական աշխարհագրության, ճարտարապետության, գրականության, պատմագրության բացառիկ իմացությամբ և փաստական հարուստ նյութ է ներառում: Այն պատկանում է հուշագրության, օրագրության և ուղեգրության ժանրին: Դրվագների ընտրության, զուսպ և տպավորիչ համեմատությունների, բնության երևույթների ու լանդշաֆտի մեջ մաիվան նշաններ տեսնող Նոգալեսը վիպագիր է, փաստերի պատկերման մեջ՝ վավերագիր, նրա պատկերած իրականությունը ցանկացած երևակայությունից ազդեցիկ է, համոզիչ ու սահմռկեցնող. այդ իրականության պատկերման մեջ Նոգալեսը գեղարվեստական միջամտության կարիք չունի. սարսափի գրականության շատ գլուխգործոցներ այս հուշագրության համեմատ մանկական թոթովանքներ կարող են համարվել: Ժամանակին ֆրանսիական դեկադանսի առաջին հեղինակներից մեկը՝ Ժորիս Կարլ Գյուիսմանսը, «Անդունդ» վերնագրով մի ամբողջ վեպ է գրել Կապույտ

---

1 Рафаэль де Ногалес, Четыре года под полумесяцем, М., Русский вестник, 2006, стр. 61

2 Նույն տեղում, էջ 3:

մորուքի նախատիպ մարշալ Ժիլ դե Ռեյի մասին, որ երեխաներ սպանելով էր զվարճանում և այդ «զվարճության» համար անսահման հնարամտություն գործադրում: Թուրքերը ևս փորձում էին սպառել սպանության հնարավոր բոլոր եղանակները՝ իրենց երևակայությամբ գերազանցելով մարշալ Ժիլ դե Ռեյին: «Հայերը մեռնում էին մարդկությանը մինչև այդ հայտնի բոլոր մահերով»[1],- գրում է Նոգալեսը՝ նողկանքով հիշելով ցեղասպանության «ամենամեծ մեղավոր» Թալեաթի՝ Մորգենթաուին տրված հայտնի պատասխանը. «Ի՞նչ սպանություններ, ա՜, այդ սպանությունները, ես պարզապես զվարճանում էի»: Ադիլջևազում հայերի զանգվածային սպանության ականատես թուրք և քուրդ կանանց անհաղորդ վերաբերմունքը նրա զարմանքն է հարուցում. «Նրանք նայում էին այդ սարսափելի տեսարանին փողոցներում և տանիքներին նստած՝ անշարժ, անթափանց, ինչպես սֆինքսներ»[2]: «Հայերը, տասնյակներով նրանց տապալող գնդակներից թունավորված ճագարների պես փախչում էին, շատերը նստում էին գետնին և անշարժ, հնազանդությամբ սպասում մահվան, ինչպես զոհաբերության քշվող ոչխարներ»[3]: Նոգալեսը նկարագրում է Բիթլիսի կոտորածը, Բիթլիսից փախչող կմախքների երթը. «Այդ փախստականների թիվը երեսուն հազար էր՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ: Նրանց հայացքները տխուր էին, միևնույն ժամանակ խիստ: Նրանք հալածվեցին այնքան, մինչև որ քշվեցին ձներով ծածկված հրաբուխների և լեռների գագաթներ՝ մռայլ և անպարագրելի լեռնաշղթային: Այնտեղ այդ մարդիկ, թիկունքով կանգնելով դեպի անդունդը, նետվում էին ցած, ոչ մի գնով չհանձնվելու համար քրդերին ու Ջևդեդ բեյին: Վերջինս իր հայրենամոլությունից, ֆանատիզմից ու արյունարբու բնազդներից, ինչ ուզում եք անվանեք, վերջնականապես վերածվել էր մահվան հրեշտակի, որ հալածում և ոչնչացնում էր հայերին արևելյան գավառներում»[4]: Նոգալեսը պատմում է, թե ինչպես էր Ջևդեդը հիվանդանոցում անձամբ անդամահատում մարդկանց առանց ախտահանելու գործիքները, ուստի հիվանդները մահանում էին փտախտից, հիվանդանոցները դատարկվում էին մեծ արագությամբ, որովհետև սնունդ էին բերում նույն պատգարակով, որով դիակ էին տեղափոխում: Դիակները ճանապարհներին ընկած էին՝ վառված, անդամահատված, բզկտված. գայլերը, բորենիներն ու ագռավներն այնքան էին լկտիացել, որ մարդկանց ներկայությամբ օրը ցերեկով վխտում էին ճանապարհներին, շրջում մարդկային մարմնի անդամները բերաններին, հոշոտում դեռ կենդանի, հոգեվարքի մեջ գտնվող մարդկանց. Նոգալեսն ականա-

---

1 Նույն տեղում, էջ 73:
2 Նույն տեղում, էջ 54:
3 Նույն տեղում, էջ 57:
4 Նույն տեղում, էջ 101:

տես է եղել, թե ինչպես է բորենին բզկտել մոր կողքին քնած մանկանը. թուրքերն ու քրդերը ոչնչով չէին տարբերվում այդ գազաններից, որոնք ի տարբերություն սրանց, ասում է նա, դիակներից ճանապարհներն ազատելու օգուտն էին տալիս: Նոգալեսը բազմիցս անդրադառնում է թուրքերի և քրդերի ազգային խառնվածքին. նրան զարմանք է հարուցում, թե ինչպես Եվրոպայում կրթված թուրքը, որ իր արտաքին հագուկապով և հղկված շարժուձևով բարեկիրթ մարդու տպավորություն է գործում, կարող է ներքուստ այդպես դաժան, արյունարբու, խաբեբա և լպիրշ դուրս գալ: Թուրքը Նոգալեսին ներկայանում է միջակ խելքի տեր և խորամանկ անձնավորություն:

Նոգալեսը ուշադրությամբ է դիտարկել նաև հայերի կենսակերպը. Խնուսում անցկացրած օրերի մասին նա հիշում է. «Այստեղ ես հնարավորություն ունեցա մոտիկից ուսումնասիրել այս հաճելի մարդկանց կյանքը, որ ինձ ողջամիտ կերպով կազմակերպված և նահապետական թվաց:

Այն ժամանակ, երբ հույնը պատրաստ է ինքն իրեն զրկել ամեն ինչից, մինչև անգամ կարգին սնունդից, որպեսզի նոր մեքենայով և ադամանդներով փայլի, հայը կուտի ամենալավ կերակուրները, կկրի ամենաորակյալ հագուստը և կփորձի ստեղծել ընդարձակ ու հարմարավետ կացարան: Հայն ունի իր մեծ թերությունները: Օրինակի համար երախտամոռությունն ու ժլատությունը, բայց ունի նաև իր սքանչելի առաքինությունները, որոնց թվում առանձնանում է անկոտրում հայրենասիրությունն ու նվիրումը քրիստոնեական հավատին, որ այդ ազգը շուրջ մեկ ու կես հազարամյակ հալածումներից հետո էլ կարողացել է պահպանել»[1]: Մեկ այլ տեղ հեղինակը գրում է. «Օսմանյան կայսրության մեջ ապրող հույները, որ չեն առանձնանում ո՛չ իրենց առաքինությամբ, ո՛չ բարեխղճությամբ, լիբանանցիների հանդեպ պարզապես սրբեր են: Մինչդեռ հայերը, որոնց նման անխիղճ արարած չկա Արևելքի ամբողջ շուկայում, կարող էին օրինակ հանդիսանալ այստեղ ապրող քրիստոնյաների, նույնիսկ եվրոպացիների համար, համենայն դեպս այն հարցերում, որ վերաբերում են ընտանեկան առաքինությանը: Հայ կինը հավատարիմ կին է և անգերազանցելի մայր: Մինչդեռ հայը ոչ մի միջոց, նույնիսկ ինքն իրեն չի խնայում իր զավակներին «եվրոպական կրթության» տալու համար, ոչ միայն միջնակարգ, այլև հնարավորության դեպքում նաև բարձրագույն: Հասկանալի է, թե հին ժամանակներում ինչու էին ազգությամբ հայ ստրուկները այնքան պահանջված, իսկ Թուրքիայի ամենահայտնի և ամենախելացի նախարարները կա՛մ հայեր էին, կա՛մ նրանց հետնորդները»[2]:

---

[1] Նույն տեղում, էջ 49:

[2] Նույն տեղում, էջ 117:

Նոգալեսը հայերին համեմատում է թուրքերի հետ և ընդգծում, որ թուրքերը ոչ մի բնագավառում չէին կարող համեմատվել հայերի հետ, որոնք իրենց եռանդով ու տաղանդով իսկական վտանգ էին ներկայացնում թուրքերի համար[1]: Մեկ այլ տեղ գրում է. «Եթե հայերը ավելի շատ զգուշություն և ավելի քիչ հավակնություններ ցուցաբերեին, այժմ, ամենայն հավանականությամբ, կղեկավարեին Թուրքիան»[2]: Նոգալեսը հայերի կողմից ռազմավարական նշանակության բազմաթիվ սխալներ է մատնանշում. նա չէր արդարացնում հայերի վարած քաղաքականությունը, հիմնականում վախն ու անբացատրելի հնազանդությունը: Հայերի զանգվածային տեղահանությունները նկարագրելով՝ նա չի թաքցնում իր զարմանքը հայ տղամարդկանց վերաբերյալ. «Ինչո՞ւ,- հարցնում եմ ինքս ինձ,- կնոջ պես լաց լինելու փոխարեն, այս վախկոտներն իսկական տղամարդու պես չեն պահում իրենց, չեն ապստամբում, հետևողական կերպով ոչնչացնելով սակավաթիվ պահակազորը, և հարձակվելով ու գրավելով փոքրիկ կայազորը, ուր մենք զենք ու զինամթերք էինք պահում»:

Եթե նրանք տիրանային այդ զենքին, ապա անմիջապես իրենց հսկողության տակ կառնեին լեռները և հնարավոր է գրավեին Ադանայի ողջ վիլայեթը և մասամբ Հալեպի վիլայեթը:

Եթե Օսմանյան կայսրության հայերը հենց սկզբից, չնչին ինտրիգների վրա ժամանակ ծախսելու և ձեռքերը ծալած Անտանտից օգնություն սպասելու փոխարեն, ամենուր և հենց սկզբից ընդվզեին, եթե հետևեին իրենց ազգային գերազանցությունը և արժանապատվությունը գիտակցող այլ ազգերի օրինակին, թաքնվեին լեռներում և ապստամբություն բարձրացնեին, ապա կկարողանային ցանկացած գնով նվաճել իրենց անկախությունը, և այսօր Հայաստանը կլիներ անկախ Բուլղարիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի պես: Եթե անկախ էլ չլիներ, գոնե իր դահիճներին կստիպեր հարգել իրեն:

Եվ դրա համար ինձ թվում է, եթե պետք է խղճալ, ապա ոչ թե հայ տղամարդկանց, այլ՝ նրանց կանանց և անմեղ երեխաներին, որոնք իրենց կյանքով հատուցեցին իրենց ամուսինների և հայրերի վախի ու եսասիրության համար»[3]:

Բանալի բառեր.- ցեղասպանություն, հուշագրություն, ազգային խառնվածք, փաստական նյութ

---

1 Նույն տեղում, էջ 105:
2 Նույն տեղում, էջ 44:
3 Նույն տեղում, էջ 128-129:

Сарибекян Грачья

Книга мемуаров “Четыре года под полналунием” Рафаэля де Ногалеса

Резюме

Наша статья о венесуэльском писателе и солдате удачи Рафаэле де Ногалесе и его мемуарах. В статье говорится о личности автора, о библиографической редкости, документальной значимости книги, и о его описании Геноцида. Выделяются несколько важных аспектов, в частности различия между национальными характерами турок и армян, а также ошибки армян стратегического значения.

Ключевые слова - Геноцид, мемуары, национальный характер, документальные материалы

Saribekyan Hrachia

Rafael de Nogales’s Memor Book “Four Years Beneath the Crescent”

Summary

This paper is about Venezuelan serviceman and writer Rafael de Nogales Mendez and his memoirs book “Four Years Beneath the Crescent”. The author refers to the Rafael de Nogales's personality, bibliographic exclusiveness of his book, factual importance and description of the Genocide. The author distinguishes a few key issues, the differences between national character of Armenians and Turks, significant strategic mistakes of Armenians in particular.

Key words - Genocide, memoirs, national character, documentary materials